



Հ Ա Լ Վ Ե (ԱԼՈՆԵ) /Aloe/



Հնագույն ժամանակներից մարդիկ հավատացել են, որ կան բույսեր, որոնք կարող են բուժել ցանկացած հիվանդություն, ինչպես նաև երկարաձգել կյանքը: Հալվեի (ալոնե) բուժիչ հատկությունների մասին տեղեկություններ կան գրված Աստվածաշնչում: Հալվեն աճում է Հարավային Աֆրիկայի մերձհասարակածային բնակլիմայական պայմաններում: Բույսի բուժիչ հատկությունների մասին տեղյակ են եղել նաև Հին աշխարհում: Բույսը մշակել են արքայական դղյակների մուտքերի մոտ: Ըստ ավանդույթի, բույսը պաշտպանում էր

ցանկացած անախոր-ժություններից: Հյուսիս հազարամյակներ շարունակ բուժել են զինվորների վերքերը: Որպես դեղամիջոց՝ լայնորեն կիրառվել է նաև Երկրորդ համաշխարհային պատերազմի տարիներին: Առավել հայտնի են հալվեի 2 տեսակ

«Ծառատիպ» (*Aloe arborescens*)

«Վերա» (*Aloe variegata*)



տեսակները: Բարձր է գնահատվում հալվելի «Վերա» տեսակի բուժիչ հատկությունները: «Մարդու կյանքի համար անհրաժեշտ են չորս բույսեր՝ ցորենը, խաղողը, ձիթապտուղը և ալոեն»: Հայ ականավոր բժշկապետ Ա.Ամասիացին գրել է. «Հալվեն օժտված է չորացնող հատկությամբ: Գլուխը մաքրում է ավելորդ հեղուկներից: Օգնում է քթի վերքերի դեպքում, սրում տեսողությունը: Մազերին քսելու դեպքում սպանում է ոջիլներին, կանխում է մազաթափությունը: Մարմնին քսելու դեպքում կթեթևացնի ասթմայով ու շնչարգելությամբ տառապողների վիճակը: Մաքրում է լյարդը, բացում խցանումները և օգնում է դեղնախտի դեպքում: Ունի ճիճվաթափ հատկություն: Բուժում է խոցերը: Եթե օգտագործեն կարագի հետ, կբուժի էկզեման և կվերացնի չորությունը: Բայց վնասակար է թուրքի դեպքում: Դրա վնասակար ազդեցությունը վերացնում է բուսախեժը: Հալվեն կօգնի դեղնախտով հիվանդին, եթե խառնեն մեղրի հետ և ուտեն, կտարբալուծի դեղին մաղձը:

Հալվեն բուժում է այն խոցերը, որոնք առաջանում են կնոջ և տղամարդու սեռական օրգանների վրա: Հիշատակություն կա նաև, որ եթե երեք օրվա ընթացքում օրական 4-5 գրամ հալվե ուտեն, երեք օր ընդմիջում տան և նորից երեք օր ուտեն, կբուժի արմատացած էկզեման: Հալվեն բացում է խցանումները, ամրացնում է լյարդը, տաքացնում և ամրացնում է ստամոքսը, օրգանիզմից դուրս է հանում գազերը, սրում է միտքը: Շատ օգտակար է ոսկրացավի և հոդացավի դեպքում: Հալվեն ստամոքսի լավագույն դեղամիջոցներից է,



հանգստացնում է ցավերը, բացում է ախորժակը, նպաստում է մարսողությանը: Հնագույն ժամանակներից Մադագասկար կղզուց բերվել և մշակվում է Արաբական թերակղզու հարավում: Արաբներն այն անվանել են դառնահամ հյութ ունեցող բույս: Բնական պայմաններում ծաղկում է գրեթե յուրաքանչյուր տարի: Ծաղկակիր ցողունը հասնում է մինչև 20մ բարձրության: Ծաղիկները գեղեցիկ են, բաց դեղինից մինչև կարմիր երանգների, ունեն խողովակի կամ

զանգակի տեսք: Հավաքված են հուրանաձև կամ ողկուզավոր ծաղկաբույլի մեջ: Մեղրատու է, փոշոտումը կատարվում է մեղվաղջերի միջոցով, որոնք խմում են ծաղիկի քաղցրահյութը: Բազմանում է սերմերի միջոցով և վեգետատիվ եղանակով:

Հայերենում անվանվում է նաև սապո, գիտական գրականության մեջ ջերմային մշակման ենթարկված հալվելի տերևի հյութն անվանում են «Մաբուր»: Վերջին տարիներին գիտնականները հայտնաբերել են բարդագույն բաղադրություն ունեցող նյութ՝ Ացեմանան, որն առկա է սապոի մեջ: Նյութը հայտնաբերվել է հալվելի «Վերա» տեսակի մեջ: Ացեմանանը ածխաջրատ է, որի մակրոմոլեկուլը հեշտությամբ է լուծվում ջրի մեջ: Բարձրացնում է օրգանիզմի դիմադրողականությունը: Նպաստում է ուռուցքներ առաջացնող բջիջներին ճնշող նյութերի ակտիվացմանը: Այսօր աշխարհի առաջատար բուժիմնարկներում «Վերա» հալվելի



հյութը կիրառվում է ուռուցքների թերապևտիկ բուժման ընթացքում՝ որպես ազդեցիկ օժանդակ միջոց: Բույսի հայրենիքը ՀԱՀ-ի Կապա մարզն է: Հյութը պարունակում է մարդու օրգանիզմում չսինթեզվող (ընդհանուր առմամբ, թվով 18 կամ 20) բոլոր ամինաթթուները, 20 հանքային, մոտ 200 այլ օգտակար նյութեր: Ամինաթթուները կարևոր են առողջ բջիջների վերականգնման համար: Պարունակում է B խմբի, E, C վիտամիններ, ենթավիտամին A: Ի սկզբանե այն օգտագործվել է՝ որպես լուծողական հատկություն ունեցող, մարսողությունը



լավացնող միջոց: Ավելի ուշ հայտնաբերվել են բույսի հականեխային, հակամանրէ, հակաբորբոքային հատկությունները: Հավելի պատրաստուկներով մշակելիս՝ բուժվում են վերքերը, այրվածքները, տրոֆիկ խոցը, որոշ մաշկային և թարախային ինֆեկցիայի հետևանքով առաջացած հիվանդություններ: Ժողովրդական ձևով բուժում են նաև կրծքապսոսների ճաքերը, բերանի և կոկորդի լորձաթաղանթի բորբոքումները, շրթունքների անկյունում առաջացած հերպեսը:

Պատրաստուկները թեթևացնում են անկողնային

հիվանդների մոտ առաջացող պառկելախոցը: Բոլոր նշված հիվանդությունների բուժումը կատարվում է հավելի պատրաստուկների արտաքին կիրառմամբ: Բնական պայմաններում աճող բույսն արտակարգ կայուն է անբարենպաստ արտաքին ազդեցությունների հանդեպ: Երաշտի դեպքում տերևի կեղևի ծակոտիները փակվում են, ինչի շնորհիվ պահպանվում է պտղամսի մեջ պարունակվող խոնավությունը: Մի շարք գիտական հետազոտությունների շնորհիվ պարզվել է, որ ջերմաստիճանի տատանումների դեպքում բույսի ներսում սկսում են ակտիվանալ կենսաբանորեն ակտիվ նյութերը: Արդյունքում՝ վնասված բջիջները վերականգնվում են: Տերևի հատույթի մակերեսը (ինչպես օրինակ, կտրված խնձորի) փոխում է իր գույնը: Դա նշանակում է, որ պտղամսում պարունակվող նյութերը գտնվում են ատոմար վիճակում: Ալոեի օգտակար նյութերը շատ արագ են տարածվում օրգանիզմում, վերականգնում հիվանդ բջիջները: Կտրված թարմ տերևը մի քանի օր պահում են 6-8°C դրական ջերմաստիճանի պայմաններում, այդ ընթացքում բույսն արտադրում է իրեն գենետիկորեն բնորոշ կենսաբանական նյութերը: Նման ձևով մշակման ենթարկված նյութերն օգտագործում են աչքերի հիվանդությունների, արյան շրջանառության խանգարման, պառկելախոցի համալիր բուժման ժամանակ: Հավելն ունի ալերգիկ հատկություն, պատրաստուկները կիրառելիս պետք է համոզվել, որ չկա անհատական անընկալություն բույսի հանդեպ: Մենք գիտենք, որ ալերգիան առաջանում է սննդամթերքում պարունակվող որոշ նյութերի կամ ինչ-որ արտաքին ազդեցության պատճառով: Բուժումը բարդ է, քանի որ դժվար է ախտորոշել բուն պատճառը: Հավելի կիրառումը շատ հաճախ օգտակար է լինում: Բույսն ունի բազմաթիվ օգտակար հատկություններ և լայն կիրառում դեղագործության և ժողովրդական բժշկության մեջ:

Այս հրատարակությունը (խմբագրությունը) ներկայացնում է <<Հայաստանի գյուղական համայնքներում ագրոկենսաբազմազանության պահպանության և օգտագործման միջոցով կենսապայմանների բարելավում>> ծրագրի արդյունքների մի մասը: Գլոբալ էկոլոգիական Հիմնադրամի (ԳԷՀ) կողմից աջակցվող սույն ծրագիրը համակարգվում է Բիովերսիթի Ինիցիատիվայի (IPGRI) կողմից ՄԱԿ-ի շրջակա միջավայրի ծրագրի իրականացման աջակցությամբ (UNEP):